



ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ
«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Գործադիր տնօրենի
հրամանով

առ «11» «մայիս» 2015թ.

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ գործադիր տնօրեն՝

_____ Ս. Գրիգորյան
ստորագրություն

Կ.Տ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Խորհրդի որոշմամբ

առ «22» «ապրիլ» 2015թ.

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ խորհրդի նախագահ՝

Գ. Զաքարյան

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
«ՌԵՍՈՊրոֆ+» ծրագրի Պայմաններ**

ԵՐԵՎԱՆ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
7. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ
9. ՍՈՒԲՐՈԳԱՑԻՍ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
12. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՁ ՍՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
14. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ
15. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. **Ապահովագրող՝ «ՌԵՄՈ»** Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրություն և ոչ կյանքի վերաապահովագրություն իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձ:
- 1.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած իրավաբանական կամ ֆիզիկական անձ:
- 1.3. **Ապահովագրված անձ՝** 1-ից մինչև 85 տարեկան, գործունակ ֆիզիկական անձ, ում օգտին կնքվել է Պայմանագիրը:
- 1.4. **Շահառու՝** Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:
- 1.5. **Ապահովագրության օբյեկտ՝** ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովագրված անձի գույքային և անձնական շահերը, որոնք կապված են Պայմանագրով սահմանված ապահովագրական պատահարների տեղի ունենալու, դրանց հետևանքով Ապահովագրված անձին ցուցաբերված բժշական օգնության և դրա արդյունքում առաջացած ծախսերի հատուցման հետ:
- 1.6. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
- 1.7. **Ապահովագրական հատուցում՝** Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից վճարվող գումար՝ համաձայն Պայմանագրի:
- 1.8. **Ապահովագրական պատահար՝** պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:
- 1.9. **Ապահովագրավճար՝** Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց Ապահովադիրի կողմից Ապահովագրողին վճարման ենթակա գումար:
- 1.10. **Չհատուցվող գումար (Տրանշիզա)՝** Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելու պարտավորությունից՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
- 1.11. **Դժբախտ պատահար՝** Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած տարբեր արտաքին գործոնների (ֆիզիկական, քիմիական, տեխնիկական և այլն) ակնթարթային հանկարծակի ներգործությունը, որի հետևանքով նա կորցրել է իր աշխատունակությունը, ստացել ֆիզիկական վնասվածք (հաշմություն) կամ մահացել, այդ թվում՝
 - բնության տարերային երևույթներ, պայթյուն, այրվածք, ցրտահարություն, ջրահեղձում, էլեկտրական հոսանքի ազդեցություն, շանթահարում, արևահարում, երրորդ անձանց կամ կենդանիների հարձակում, Ապահովագրված անձի կամ նրա վրա որևէ իրի վայր ընկնելը, անսպասելի խեղդամահություն, օտար մարմնի հանկարծակի ընկնելը շնչառական ուղիներ, հանկարծակի սուր թունավորում վնասակար մթերքներով կամ նյութերով (թունավոր բույսերով, քիմիական նյութերով, դեղորայքով, վատորակ սննդամթերքով), ինչպես նաև տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով տեղի ունեցած դեպքեր, վթարներ, մեքենաների, մեխանիզմների, արտադրության միջոցների և այլ սարքերի օգտագործում:
 - Դժբախտ պատահար չեն համարվում սուր, քրոնիկական և ժառանգական հիվանդությունների ցանկացած ձևերը /այդ թվում՝ սրտի կաթված, ուղեղի կաթված և օրգանների այլ հանկարծակի վնասվածքներ, որոնք ժառանգական պաթոլոգիայի կամ հիվանդության զարգացման հետևանքով առաջացած պաթոլոգիայի հետևանք են (անաֆիլակտիկ շոկ, ինչպես նաև ինֆեկցիոն հիվանդություններ, սննդային տոքսիկոզ ինֆեկցիա) սալմոնելեզ, դիզենտերիա և այլն/:
- 1.12. **Բժշկական հաստատություն՝** Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում՝ սույն պայմանագրի հիման վրա կնքված ապահովագրության վկայագրում նշված բժշկական կենտրոն, իսկ Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում՝ ՀՀ և ԼՂՀ տարածքում գրանցված և լիցենզավորված ցանկացած բժշկական հաստատություն:
- 1.13. **Բժիշկ՝** Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում՝ սույն պայմանագրի հիման վրա կնքված ապահովագրության վկայագրում նշված բժշկական կենտրոնի, իսկ Դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատության աշխատակից հանդիսացող բժիշկ, որը չի հանդիսանում Ապահովագրված անձ, նրա կին/ամուսին կամ ազգական:
- 1.14. **Բժշկական ծառայություններ (բժշկական օգնություն)՝** միջոցառումներ կամ միջոցառումների կոմպլեքս, որոնք ուղղված են Ապահովագրված անձի հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը և բուժմանը:

- 1.15. Մշտական անաշխատունակություն՝** Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մարմնի անդամների կամ զգայական օրգանների կորուստ, կամ դրանց 70 և ավելի տոկոսով ֆունկցիոնալ խանգարում, ինչը առաջացնում է Ապահովագրված անձի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն:
- 1.16. Ապահովագրության ID քարտ (այսուհետ՝ Քարտ)**՝ Ապահովագրողի կողմից Ապահովագրված անձին տրվող քարտ՝ ի հաստատումն այն փաստի, որ նշված անձը ապահովագրված է Ապահովագրողի կողմից՝ Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:
- 1.17. Ծրագիր՝** Պայմանագրով Ապահովագրված անձին տրամադրվող ապահովագրական ծածկույթ, որի շրջանակներում իրականացվում է վերջինիս ապահովագրությունը և կատարվում հատուցումները:
- 1.18. Ընտանիքի անդամ՝** Ապահովագրված անձի ծնողներ, կին, ամուսին, երեխա՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում (ծննդյան վկայական, ամուսնության վկայական):

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1.** Առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության <<ՌԵՍՈՊրոֆ+>> պայմանները (այսուհետ՝ Պայմաններ), սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության վկայագրի հետ միասին հանդիսանում են Առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության <<ՌԵՍՈՊրոֆ+>> պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմաններում պարունակվող և Պայմանագրի մեջ չընդգրկված պայմանները պարտադիր են Ապահովագրողի/ապահովագրված անձի (Շահառուի) համար:
- 2.2.** Սույն Պայմանները մշակված են ՀՀ օրենսդրության հիման վրա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք և այլն): Սույն Պայմաններով Ապահովագրողը կնքում է Կամավոր առողջության և դժբախտ դեպքերից ապահովագրության պայմանագրեր (Այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ (Այսուհետ՝ Ապահովադիր) և տրամադրում ապահովագրական հատուցումներ՝ համաձայն սույն Պայմանների ապահովագրական ծածկույթների (Այսուհետ՝ Ծածկույթ):
- 2.3.** Պայմանագիրը վերաբերում է առողջության ապահովագրության (հատուցմամբ կախված պատահարի բնույթից) և դժբախտ պատահարներից (ամրագրված դրամական հատուցմամբ և հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից) դասին:

3. Ապահովագրական պատահար

- 3.1.** Ըստ Պայմանագրի Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրողին և/կամ Ապահովագրության վկայագրում տվյալ ծածկույթի համար նշված Բժշկական հաստատություն դիմելը՝ վատառողջության դեպքում/հիվանդության (վիճակի) նշանների, հիվանդության (վիճակի), վնասվածքի, թունավորման դեպքերում բժշկական և այլ բուժական ծառայություններ ստանալու համար, իսկ Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրողին և/կամ Բժշկական հաստատություն դիմելը՝ վնասվածքի, կոտրվածքի, ժամանակավոր անաշխատունակության դեպքում, այն պայմանով, որ այդ բուժումը և/կամ բուժական միջոցները տեղական բժշկական լիազոր մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ և նպատակահարմար՝ տվյալ վնասվածքի, կոտրվածքի կամ վիճակի համար: : Ընդ որում, սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 2-ում նշված հիվանդությունների/վատառողջության վիճակների և դեպքերի պարագայում դեպքը չի որակվում որպես ապահովագրական պատահար և չի հատուցվում:
- 3.2.** Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում իրեն հայտնի դարձած Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում կազմակերպել Ապահովագրված անձին բժշկական ծառայությունների մատուցումը Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում միայն Պայմանագրի հիման վրա կնքված ապահովագրության վկայագրում տվյալ ծածկույթի համար նշված բժշկական կենտրոնում և վճարել այդ ծառայությունների համար միայն տվյալ բժշկական կենտրոնին, իսկ Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում՝ Բժշկական հաստատություններում և վճարել այդ բժշկական ծառայությունների համար կամ անմիջապես բժշկական հաստատությանը կամ Ապահովագրված անձին, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել Պայմանագրով սահմանված ապահովագրավճարը:
- 3.3.** Հատուցումները վճարվում են Ապահովագրողի կողմից այնքանով, որքանով մատուցված բժշկական ծառայությունները համապատասխանում են ախտանշաններին, նշանակումներին կամ ախտորոշմանը (հիվանդանոցային բուժ.օգնության դեպքում դա նաև նշանակում է, որ հաշվի առնելով ախտանշանները կամ

վիճակը, տրամադրված ծառայությունները ամբուլատոր պայմաններում չեն կարող մատուցվել անվտանգ ճանապարհով), անհրաժեշտ և նպատակահարմար են տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար, ընդ որում, տվյալ ծառայությունները չպետք է իրականացվեն բացառապես Ապահովագրված անձի, բժշկի կամ բժշկական օգնությունն իրականացնող անձի հարմարավետությունից ելնելով, և դրանց դիմաց գանձումները ողջամիտ են և համապատասխանում են սովորաբար նման դեպքերի համար ընդունված վճարների չափին:

- 3.4. Մատուցված բժշկական ծառայությունների արժեքը որոշվում է բուժ.հաստատության կողմից հաստատված գների համաձայն: Միաժամանակ հաշվի են առնվում նաև բուժման բարդությունը, պահանջվող մասնագիտական հմտությունները:
- 3.5. Բժշկական հաստատության կողմից Ապահովագրված անձին մատուցվող և, ըստ Պայմանագրի, Ապահովագրողի կողմից հատուցվող բժշկական ծառայությունների ծավալը, ինչպես նաև այդպիսի ծառայությունների մատուցման կարգը որոշվում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածներ 1-ով, 2-ով, 5-ով նախատեսված Օրագրերի, կարգի և բացառությունների համապատասխան և բացառապես դրանց շրջանակներում:
- 3.6. Սույն Պայմանագրի համաձայն ապահովագրական տարածք է համարվում Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, բացառությամբ այն հատվածների, որտեղ հայտարարված է արտակարգ իրավիճակ կամ իրականացվում են ռազմական գործողություններ:
- 3.7. Ըստ Պայմանագրի չհատուցվող գումար չի կիրառվում:

4. Ապահովագրության օբյեկտ

- 4.1. Սույն պայմաններով ապահովագրության օբյեկտ են համարվում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովագրված անձի գույքային և անձնական շահերը, որոնք կապված են Պայմանագրով սահմանված ապահովագրական պատահարների տեղի ունենալու, դրանց հետևանքով Ապահովագրված անձին ցուցաբերված բժշկական օգնության և դրա արդյունքում առաջացած ծախսերի հատուցման հետ:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 5.1. Պայմանագրի կնքման ժամանակ դրանով մի քանի ապահովագրական ռիսկերի ապահովագրման դեպքում Պայմանագրով կարող է սահմանվել մեկ ընդհանուր ապահովագրական գումար՝ վերոհիշյալ բոլոր ռիսկերի համար կամ յուրաքանչյուր ռիսկի համար առանձին ապահովագրական գումարի ենթասահմանաչափ:
- 5.2. Ապահովագրական գումարը, որի սահմաններում Պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովագրական հատուցում, «Ամբուլատոր օգնություն» ծածկույթով կազմում է յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 2,000,000 (Երկու միլիոն) ՀՀ դրամ, ինչպես նաև «Դժբախտ պատահարներից ապահովագրություն» ծածկույթով կազմում է յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 2,000,000 (Երկու միլիոն) ՀՀ դրամ: Ընդ որում, յուրաքանչյուր Ծածկույթի համար նախատեսված ապահովագրական գումարը նվազում է այդ ծածկույթի շրջանակներում Ապահովագրված անձին տրամադրված Ապահովագրական հատուցման չափով:
- 5.3. Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում առանձին ապահովագրական պատահարների (ռիսկերի) համար սահմանվում են Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի նկատմամբ սահմանված ապահովագրական գումարի հետևյալ սահմանաչափերը.
 - Մահ Դժբախտ պատահարի հետևանքով՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար՝ ապահովագրական գումարի 100% :
 - Մշտական անաշխատունակություն Դժբախտ պատահարի հետևանքով՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար՝ I կարգ՝ ապահովագրական գումարի 75%, II կարգ՝ ապահովագրական գումարի 60%:
 - Կոտրվածքներ Դժբախտ պատահարի հետևանքով՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար՝ Ամբուլատոր բուժման դեպքում հատուցման ենթակա է փաստացի կատարված ծախսերը, սակայն ոչ ավել քան Ապահովագրական գումարի 30%-ը: Հիվանդանոցային բուժման դեպքում հատուցման ենթակա է փաստացի կատարված ծախսերը, սակայն ոչ ավել քան Ապահովագրական գումարի 50%-ը:
 - Վնասվածքներ Դժբախտ պատահարի հետևանքով՝ Ամբուլատոր բուժման դեպքում հատուցման ենթակա է փաստացի կատարված ծախսերը, սակայն ոչ ավել քան Ապահովագրական գումարի 10%-ը: Հիվանդանոցային բուժման դեպքում հատուցման ենթակա է փաստացի կատարված ծախսերը, սակայն որ ավել քան Ապահովագրական գումարի 40%-ը:

6. Ապահովագրավճարը և դրա վճարման կարգը

- 6.1. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:

- 6.2. Ապահովագրավճարը ենթակա է վճարման Ապահովադրի կողմից միանվագ՝ Պայմանագրի կնքման օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում:
- 6.3. Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադրին կարող է տրվել հնարավորություն տարածամկետ կարգով կատարել ապահովագրավճարի վճարումը: Ընդ որում, տարածամկետ կարգով վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասը, որը կազմում է Պայմանագրով սահմանված ընդհանուր Ապահովագրավճարի 60 %-ը, Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրի կնքման օրվանից 10 (Տասը) օրվա ընթացքում, իսկ մնացած 40%-ը՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 5 (Հինգ) ամսվա ընթացքում:
- 6.4. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովադրին և միակողմանի լուծում է պայմանագիրը, և ազատվում Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած պատահարների հետ կապված ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:
- 6.5. Վերլուծելով բոլոր վիճակագրական տվյալները՝ Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրի համաձայնությամբ վերանայել վճարման ենթակա ապահովագրավճարի չափը՝ հաջորդ ապահովագրական տարվա համար Պայմանագիրը վերակնքելու դեպքում:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ապահովադրին իրավունք ունի.

- 7.1.1. Սույն Պայմանագրում նշված Ապահովագրված անձին փոխարինել այլ անձով՝ Ապահովագրված անձին այդ մասին ծանուցելով և ներկայացնելով Ապահովագրողին դիմում: Ընդ որում, Ապահովագրված անձը չի կարող փոխարինվել այլ անձով այն բանից հետո, երբ Ապահովագրված անձը Ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտավորություն կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել Ապահովագրական հատուցում ստանալու համար: Ընդ որում, Ապահովադիրն իրավունք ունի իրացնել նշված իրավունքը միայն յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-րդ կամ 20-րդ ամսաթվին՝ այդ մասին դիմումը ներկայացնելով ոչ պակաս, քան դիմումում նշված Ապահովագրված անձի (անձանց) փոխարինման ամսաթվից 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Դիմումը կարող է ներկայացվել առձեռն առաքման, փոստային կամ էլեկտրոնային կապի միջոցով: Պայմանագիրը տվյալ ապահովագրված անձի նկատմամբ համարվում է դադարեցված դիմումի մեջ նշված ամսաթվի 00:00-ից, իսկ նոր Ապահովագրված անձի մասով պայմանագիրն ուժի մեջ է մտնում լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից 10 օր հետո ժամը 00:00-ից, եթե Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Այդ դեպքում Ապահովագրված անձանց տվյալները Ծրագրի շրջանակներում փոփոխվում է:
- 7.1.2. Ապահովագրված անձի (անձանց) փոփոխության մասին լրացուցիչ համաձայնագրերը կնքվում են գրավոր ձևով և հաստատվում կողմերի կողմից: Փաստաթղթերի փոխանակումը կարող է իրականացվել առձեռն առաքման կամ փոստային կապի միջոցով:

7.2. Ապահովագրված անձն իրավունք ունի.

- 7.2.1. Պայմանագրի պայմանների համաձայն պահանջել Ապահովագրողից Բժշկական ծառայությունների կազմակերպում և/կամ վճարում,
- 7.2.2. Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու միջոցով Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ/լրացումներ կատարել «Շահառուի նշանակման ձև»-ում (համաձայն Պայմանագրի թիվ 3 Հավելվածի):
- 7.2.3. Պայմանագրի գործողության ընթացքում անհրաժեշտության առաջացման դեպքում Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում դիմել իր կողմից ընտրված բժշկական կենտրոն, իսկ Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված Բժշկական հաստատություն կամ լիցենզավորված բժշկի,
- 7.2.4. Քարտի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը:

7.3. Ապահովագրողն իրավունք ունի.

- 7.3.1. Վաղաժամկետ դադարեցնել Ապահովագրված անձի Պայմանագիրը և (կամ) մերժել նրա ապահովագրական հատուցում ստանալու դիմումը՝ վերջինիս կողմից Պայմանագրի 7.5.1.-7.5.5. և 8.1. կետերով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում, եթե այդ պարտավորությունների չկատարումը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել Ապահովագրողի կողմից լրացուցիչ ծախսերի իրականացմանը: Այս դեպքում ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում: Ապահովագրված անձի ապահովագրությունը վաղաժամկետ դադարեցնելու մասին Ապահովագրողը գրավոր տեղեկացնում է Ապահովադրին,
- 7.3.2. Ստուգել Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից տրամադրված տեղեկությունների և տեղեկատվության արժանահավատությունն իրեն հասանելի ցանկացած միջոցով, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը,

- 7.3.3. Մասնակցել ապահովագրական պատահարների քննությանը և կատարել Պայմանագրի գործողության ժամանակահատվածում դրա սպասարկման հետ կապված այլ աշխատանքներ,
- 7.3.4. Ապահովագրական պատահարների հետ կապված տեղեկությունների վերաբերյալ հարցումներ անել իրավասու մարմիններին, բժշկական և այլ կազմակերպություններին ու հաստատություններին, որոնք տնօրինում են ապահովագրական պատահարի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի պատճառներն ու հանգամանքները,
- 7.3.5. Մերժել ապահովագրական հատուցման տրամադրումն այն դեպքերում, որոնց համար Պայմանագրի պայմաններով հատուցում չի իրականացվում: Ապահովագրողը պատասխանատու է միայն այն Ապահովագրական պատահարների համար, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության տարածքում՝ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,
- 7.3.6. Հետաձգել ապահովագրական հայտի կարգավորումը՝ մինչև պատահարի մասին ամբողջական տեղեկատվության և այն հաստատող փաստաթղթերի ստացումը՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի,
- 7.3.7. Իրականացնել ապահովագրական հատուցման վճարման պահանջի կապակցությամբ առաջացած բոլոր միջոցառումների անցկացման վերահսկողություն, իսկ Ապահովագրի համաձայնությամբ՝ նաև դեկավարում,
- 7.3.8. Եթե Ապահովագրողի մոտ հիմնավոր կասկած է առաջանում այն մասին, որ ներկայացված հատուցման պահանջը կեղծ է, Պայմանագրի շրջանակներում հատուցում ստանալու համար խարդախորեն օգտագործվել են կեղծված միջոցներ կամ գործողություններ, Ապահովագրված անձը կամ նրա անունից գործող անձը թաքցրել է ապահովագրական պատահարին վերաբերող իրեն հայտնի էական փաստերը, տրամադրել է կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրին նախապես այդ մասին գրավոր ծանուցելով տվյալ դեպքով չվճարել ապահովագրական հատուցում, լուծել Պայմանագիրը տվյալ անձի նկատմամբ և չվերադարձնել նրա համար վճարված ապահովագրավճարը:

7.4. Ապահովագրիչը պարտավոր է.

- 7.4.1. Վճարել ապահովագրավճարը՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և ժամկետներում,
- 7.4.2. Ապահովագրողին ներկայացնել դիմում Ապահովագրված անձանց ցուցակում փոփոխություններ կատարելու մասին՝ սույն Պայմանագրի 7.1.1. կետի պահանջներին համապատասխան,
- 7.4.3. Բացատրել Ապահովագրված անձին Պայմանագրով սահմանված ապահովագրության պայմանները, փոխանցել նրան Քարտը, ընդ որում, Ապահովագրված անձի կողմից Քարտի ընդունումը հավաստում է ապահովագրվելուն իր համաձայն լինելու փաստը,
- 7.4.4. Տեղեկացնել Ապահովագրողին իր բանկային վավերապայմանների, իրավաբանական և փաստացի գտնվելու վայրի, կոնտակտային հեռախոսահամարների և ֆաքսի համարների փոփոխության մասին, նման փոփոխության գրանցումից առնվազն 10 օրվա ընթացքում,
- 7.4.5. Աջակցել Ապահովագրողի ներկայացուցչին Պայմանագրի կնքման և գործողության ժամկետի ողջ ընթացքում դրա սպասարկման հետ կապված միջոցառումների անցկացմանը:
- 7.4.6. Պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին ներկայացնել Ապահովագրված անձանց ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթերը:

7.5. Ապահովագրված անձը պարտավոր է.

- 7.5.1. Չփոխանցել Ապահովագրական քարտը այլ անձանց,
- 7.5.2. Քարտի կորստի դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնել դրա մասին Ապահովագրողին,
- 7.5.3. Փոխհատուցել Ապահովագրողի կրած ծախսերը իր կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում, եթե այդպիսի չկատարումը լամ թերի կատարումը հանգեցրել է Ապահովագրողի լրացուցիչ ծախսերի:
- 7.5.4. Առձեռն առաքման, փոստային, ֆաքսիմիլային կապի միջոցով կամ գրավոր դիմումով իրազեկել Ապահովագրողին Բժշկական ծառայությունների չմատուցման, ոչ լրիվ կամ անորակ մատուցմա դեպքերի մասին:
- 7.5.5. Պայմանագրի գործողության ընթացքում անհրաժեշտության առաջացման դեպքում Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում դիմել բացառապես տվյալ ծածկույթի համար Ապահովագրության վկայագրում նշված բժշկական կենտրոն՝ դրա շրջանակներում չկատարելով որևէ վճարում:
- 7.5.6. Մֆերա Միջազգային Բժշկություն ծածկույթի <<Բուժման ֆիքսված և ապահովագրված արժեք>> հասանելիության շրջանակներում կրել արտասահմանում ախտորոշման և բուժման ծախսերը:

7.6. Ապահովագրողը պարտավոր է.

- 7.6.1. Ժամանակին Ապահովագրի տրամադրել Ապահովագրված անձանց Քարտերը և Պայմանները,
- 7.6.2. Վերահսկել իր կողմից կազմակերպված բժշկական ծառայությունների մատուցման ծավալը, ժամկետները և որակը,
- 7.6.3. Չբացահայտել Ապահովագրի և Ապահովագրված անձանց մասին սույն Պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- 7.6.4. Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնել ապահովագրական հատուցման վճարման, մասնակի վճարման կամ հատուցման մերժման որոշում, իսկ հատուցման մերժման դեպքում ապահովել պատճառաբանված հիմնավորում,

- 7.6.5. Պայմանագրով նախատեսված կարգով կատարել Ապահովագրական հատուցում՝ հատուցման վճարման դրական որոշման ընդունման պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 7.6.6. Հայտնել Ապահովադրին իր բանկային վավերապայմանների, իրավաբանական և փաստացի գտնվելու վայրի, կոնտակտային հեռախոսահամարների փոփոխության մասին՝ նման փոփոխությունների տեղի ունենալու օրվանից՝ 10-օրյա ժամկետում:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

- 8.1. Կողմերը գաղտնի են համարում հետևյալ տեղեկատվությունը.
- 8.1.1. Ապահովագրված անձի հիվանդությունների, մարմնական վնասվածքների մասին, ինչպես նաև նրա բժշկական օգնության դիմելու դեպքերի,
- 8.1.2. ըստ Պայմանագրի վճարման ենթակա ապահովագրավճարների չափերի մասին տեղեկությունները,
- 8.1.3. ՀՀ օրենսդրությամբ պաշտպանվող ցանկացած տիպի գաղտնիք պարունակող և Պայմանագրի կատարման կապակցությամբ Կողմերին հայտնի դարձած տեղեկությունները:
- 8.2. Կողմերը կձեռնարկեն բոլոր բավարար և անհրաժեշտ միջոցները գաղտնի տեղեկատվության հրապարակումը կանխարգելելու համար:
- 8.3. Պայմանագրի սույն կետն ուժի մեջ է մնում Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո ևս 5 (հինգ) տարվա ընթացքում:

9. ՍՈՒԲՐՈՎԱՑԻՍ

- 9.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 9.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
- 9.3. Ապահովադրի (շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 9.4. Եթե ապահովադրի (շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:
- 9.5. Եթե Ապահովադրի կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել են պատճառված Վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրի և սույն ապահովագրության Պայմանների պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԿԱՆ ՊԱՏԱՏԱՐԻ ԿԱՊԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 10.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրի/Ապահովագրված անձը կրում է հետևյալ պարտավորությունները.
- 10.1.1. Բժշկական ծառայությունների կազմակերպման համար Ապահովադրի/Ապահովագրված անձը պարտավոր է բուժ. օգնություն ստանալու անհրաժեշտության առաջանալուց անմիջապես, սակայն ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորություն ընձեռնվելիս՝ անմիջապես, դիմել Ապահովագրողին՝ զանգահարելով վերջինիս Կոորդինացիոն կենտրոնի շուրջօրյա հեռախոսահամարով, որը նշված կլինի նաև Քարտի վրա և տեղեկացնել Ապահովագրողի Կոորդինացիոն կենտրոնի աշխատակցին բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտության և/կամ հիմնավորված նպատակահարմարության մասին:

Ապահովագրողի Կոորդինացիոն կենտրոնի հեռախոսահամարն է՝

(+37460) 27 57 57 (շուրջօրյա)

Վերոնշյալ ժամկետում ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին չտեղեկացնելու դեպքում Ապահովադրի/Ապահովագրված անձը պարտավոր է գրավոր հիմնավորել տեղեկացման սահմանված ժամկետի հետաձգման պատճառը: Ապահովագրական պատահարի մասին սահմանված ժամկետում Ապահովագրողին չտեղեկացնելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը:

- 10.1.2.** Ապահովագրողի կորդինացիոն կենտրոնի հետ կապ հաստատելիս Ապահովագրված անձը հաղորդում է իր անունը, ազգանունը և Քարտի համարը:
- 10.1.3.** Ապահովագրված անձը հաղորդում է պատահարի մանրամասները և նշում, թե կոնկրետ ինչպիսի բուժ. օգնության կարիք ունի:
- 10.2.** Հնարավոր ապահովագրական պատահարի մասին տեղեկանալուց հետո, Կորդինացիոն կենտրոնի աշխատակիցը գրանցում է կատարում դեպքի մասին՝ զանգը փոխանցելով Հատուցումների բաժին՝ Բժիշկ մասնագետին, ներկայացնում է հայտի բովանդակությունը և հայտը ներկայացնող անձի կոնտակտային տվյալները:
- 10.2.1.** Եթե դեպքը համապատասխանում է Ամբուլատոր օգնություն ծածկույթին, ապա բժիշկ-կորդինատորը/բուժ.խորհրդատուն կազմակերպում է անհրաժեշտ խորհրդատվություններ/հետազոտությունները Ապահովագրի կողմից ընտրված տվյալ ծածկույթով բուժ.սպասարկում իրականացնող բժշկական կենտրոնում:
- 10.2.2.** Եթե դեպքը համապատասխանում է Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթին, ապա բժիշկ-կորդինատորը/բուժ.խորհրդատուն կազմակերպում է անհրաժեշտ խորհրդատվություններ/հետազոտությունները Բժշկական հաստատություններում:
- 10.3.** Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում Ապահովագրական պատահար տեղի ունենալիս Ապահովագրված անձը/Շահառուն կրում են նաև հետևյալ պարտավորությունները.
- 10.3.1.** Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է դիմել Բժշկական հաստատություն և/կամ Բժշկի՝ համապատասխան բուժում ստանալու համար, ինչպես նաև հետագայում հետևել նրա խորհուրդներին,
- 10.3.2.** Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրված անձը/Շահառուն Ապահովագրողին ներկայացնում է գրավոր դիմում, որի տիպային ձևը վերջինիս տրամադրվում է Ապահովագրողի Անձնական ապահովագրության հայտերի սպասարկման բաժնի աշխատակցի կողմից:
- 10.3.3.** Ենթադրելի հաշմանդամության (բժշկի կողմից նման կանխորոշման կամ նշված փաստի մասին վկայող այլ հանգամանքների առկայության) առաջացման դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին՝ իր տեղեկանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- 10.3.4.** Ապահովագրված անձը պարտավոր է ապահովագրական պատահարի փաստի արձանագրումը կատարել համապատասխան փաստաթղթերով (ՀՀ Ոստիկանության կամ համապատասխան ստորաբաժանման տեղեկանք և/կամ եզրակացություն, և բժշկական հաստատության տեղեկանք, և/կամ եզրակացություն և/կամ էպիկրիզ և/կամ ամբուլատոր քարտից քաղվածք և այլն),
- 10.3.5.** Մշտական անաշխատունակության փաստը պետք է հաստատվի Պայմանագրով մշտական անաշխատունակության ծածկույթում ներառված վնասվածքների/վիճակների մասին վկայող բժշկական հաստատության և/կամ այլ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի հիման վրա և համապատասխան լիազոր մարմնի կողմից հաշմանդամության խումբ/կարգ հատկացնելու մասին որոշմամբ (եթե դա նախատեսվում է նման վնասվածքի/վիճակի համար):
- 10.3.6.** Շահառուն պարտավոր է Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրողին ապահովագրական հատուցման վճարման պահանջի գրավոր դիմում-հայտի հետ միաժամանակ տրամադրել Ապահովագրված անձի մահվան վկայականը, փաստաթղթեր, որոնք իրավունք են վերապահում ստանալ ապահովագրական հատուցում Շահառուի իրավունքով, անձը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դժբախտ պատահարի պատճառների, բնույթի և առաջացած հետևանքների հետ պատահարի կապը որոշելու համար,
- 10.3.7.** Ապահովագրված անձը պարտավոր է հաշմանդամության դեպքում՝ Ապահովագրողին ապահովագրական հատուցման վճարման պահանջի գրավոր դիմումի հետ միաժամանակ տրամադրել պաշտոնապես լիազորված հանձնաժողովի եզրակացությունը հաշմանդամության խմբի (կարգի) սահմանման մասին՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դժբախտ պատահարի պատճառների, բնույթի և առաջացած հետևանքների հետ պատահարի կապը որոշելու համար,
- 10.3.8.** Ապահովագրված անձը հատուցում ստանալու համար պարտավոր է Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը.
- բժշկական հաստատության տեղեկանք կամ եզրակացություն կամ էպիկրիզ կամ քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից և այլն,
 - պարակլինիկական հետազոտությունների պատասխանների պատճենները (անհրաժեշտության դեպքում),
 - ՀՀ Ոստիկանության կամ քննչական մարմնի /օտարերկրյա համապատասխան իրավասու մարմնի/ կողմից Դժբախտ պատահարի կապակցությամբ տրված համապատասխան փաստաթուղթ (որոշում, եզրակացություն, արձանագրություն և այլն):

- 10.4.** Դժբախտ պատահարներից ապահովագրության շրջանակներում Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովագրված անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների հետ կապված:
- 10.5.** Եթե Ապահովագրողի մոտ ի հայտ են գալիս հիմնավորված կասկածներ այն մասին, որ հատուցման պահանջը կեղծ է, հատուցում ստանալու համար սույն պայմանագրի շրջանակներում կիրառվել են խարդախ (կեղծված), շինծու միջոցներ կամ գործողություններ, Ապահովագրվածը կամ նրա անունից գործող անձը ներկայացրել է կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը տվյալ անձի նկատմամբ և չվերադարձնել ապահովագրավճարը, ինչպես նաև տվյալ դեպքով չտրամադրել ապահովագրական հատուցում:
- 10.6.** Մֆերա միջազգային բժշկություն ծածկույթի շրջանակներում հայտ ներկայացնելու դեպքում՝
- 10.6.1.** Ապահովագրված անձը պարտավոր է աշխատանքային օրերին տեղական ժամանակով 09:00-ից մինչև 21:00 ընկած ժամանակահատվածում, իսկ ոչ աշխատանքային օրերին 10:00-ից մինչև 16:00 ընկած ժամանակահատվածում զանգահարել 060 27 20 20 հեռախոսահամարով կամ մուտք գործել գործել www.reso.am կայք էջ և այնտեղ սեղմելով <<Մֆերա միջազգային բժշկություն>> կոճակին, հետևել հրահանգներին և օգտվել տվյալ ծածկույթով նախատեսված իրեն անհրաժեշտ ծառայություններից,
- 10.6.2.** Ապահովա՞րողի կողողինացիոն կենտրոնի հետ կապ հաստատելիս Ապահովագրված անձը հաղորդում է իր անունը, ազգանունը և Պայմանագրի համարը և զանգը փոխանցվում է Իսպանիա՝ Մֆերա Ընկերության հայախոս մասնագետին, կամ հեռախոսազանգը ավտոմատ կերպով փոխանցվում է տվյալ ծածկույթի շրջանակներում Ապահովագրողի հետ համագործակցող Ընկերության հայախոս մասնագետին,
- 10.6.3.** Հնարավոր ապահովագրական պատահարի մասին տեղեկանալուց հետո, Համագործակցող Ընկերության Կոորդինացիոն կենտրոնի հայախոս մասնագետը գրանցում է կատարում դեպքի մասին և ստացված տեղեկատվությունը փոխանցում համապատասխան բժշկին:
- 10.6.4.** Հայտի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ Հարց բժշկին՝ ծառայությունից օգտվելու դեպքում՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Երկրորդ բժշկական կարծիք՝ ծառայությունից օգտվելու դեպքում 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում բժիշկը/հայախոս մասնագետը հեռախոսով, գրավոր կամ էլ. հասցեով տեղեկացնում է Ապահովագրված անձին:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 11.1.** Ամբուլատոր օգնություն ծածկույթի շրջանակներում բոլոր հատուցումներն իրականացվում են Ապահովագրողի կողմից՝ Ապահովագրության վկայագրում նշված տվյալ ծածկույթով բուժ. սպասարկում իրականացնող բուժ.հաստատությանը վճարումներ իրականացնելով,
- 11.2.** Ապահովագրության ծածկույթների շրջանակներում յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար նախատեսված ապահովագրական գումարը նվազեցվում է այդ անձին տրամադրված բուժօգնության գումարի չափով: Ընդ որում, յուրաքանչյուր Ծածկույթի համար նախատեսված ապահովագրական գումարը նվազում է այդ ծածկույթի շրջանակներում Ապահովագրված անձին տրամադրված Ապահովագրական հատուցման չափով:
- 11.3.** Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում Պայմանագրով նախատեսված հատուցումները վճարվում են, եթե դժբախտ պատահարն առաջացել է Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, իսկ Պայմանագրով նախատեսված հետևանքները վրա են հասել դժբախտ պատահարի օրվանից ոչ ուշ քան 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում:
- 11.4.** Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում Ապահովագրական հատուցման չափը որոշվում է “Ապահովագրական ծածկույթի ոլորտը և տեսակները” Ապահովագրական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն (Հավելված 1),
- 11.5.** Սույն պայմանագրով ապահովագրության շրջանակներում յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար հատուցման ընդհանուր գումարը բոլոր ապահովագրական պատահարների գծով չպետք է գերազանցի յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար Պայմանագրով սահմանված յուրաքանչյուր ապահովագրության Ծրագրով նախատեսված ապահովագրական գումարը: Ապահովագրված անձի ապահովագրական Ծրագրերից յուրաքանչյուրով նախատեսված ամբողջ գումարի վճարման դեպքում Պայմանագիրը հատուցում ստացած անձի նկատմամբ տվյալ Ծրագրի շրջանակներում համարվում է դադարած:
- 11.6.** Դժբախտ պատահարներից ապահովագրության շրջանակներում հատուցումը կարող է վճարվել նաև Ապահովագրված անձի կամ Շահառուի ներկայացուցչին՝ Ապահովագրված անձի կամ Շահառուի կողմից պատշաճ ձևակերպված լիազորագրի հիման վրա:
- 11.7.** Դժբախտ պատահարներից ապահովագրության շրջանակներում եթե միննույն դժբախտ պատահարի արդյունքում հասցված վնասը հատուցման է ենթակա մեկից ավելի ապահովագրական ռիսկերի գծով, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարում է դրանց համար սահմանված ապահովագրական գումարներից առավելագույնի չափով:
- 11.8.** Դժբախտ պատահարներից ապահովագրության ծածկույթի շրջանակներում եթե Ապահովագրված անձը Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ

գործունակ, ապա ապահովագրական հատուցում ստանալու հետ կապված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ապահովագրողի կողմից այդպիսի Ապահովագրված անձի օրինական ներկայացուցչին ապահովագրական հատուցման վճարման պահից Ապահովագրողն ազատվում է Ապահովագրված անձին, Շահառուին կամ նրանց օրինական ժառանգներին տվյալ ապահովագրական պատահարի գծով հատուցումներ իրականացնելու հետագա որևէ պարտավորությունից:

11.9. Մահ դժբախտ պատահարի հետևանքով.

11.9.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է, եթե Ապահովագրված անձի մահը վրա է հասել ոչ ուշ, քան մահացու ելքի հանգեցրած դժբախտ պատահարի օրվանից 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում, ընդ որում, եթե դժբախտ պատահարը, որի արդյունքում վրա է հասել Ապահովագրված անձի մահը, տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

11.9.2. Ապահովագրված անձի մահվան դեպքում նրա Շահառուին կամ ժառանգին (Շահառուի բացակայության կամ ապահովագրական հատուցման ստացումից վերջինիս հրաժարման դեպքում) վճարվում է Սույն Պայմանների 5.2 կետով յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար նախատեսված ապահովագրական գումարի 100%-ը:

11.9.3. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Սույն Պայմանների 7.6.4. և 7.6.5. կետերով սահմանված ժամկետներում:

11.9.4. Եթե Շահառուն կամ Ապահովագրված անձի օրինական ժառանգը դատարանի կողմից ճանաչվում են մեղավոր Ապահովագրված անձի մահվան մեջ, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրված անձի մահվան հետ կապ չունեցող այլ օրինական ժառանգների՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժառանգական հաջորդականությամբ:

11.9.5. Ապահովագրված անձի մահը հավաստվում է Շահառուներից մեկի կամ վերջիններիս բացակայության դեպքում՝ օրինական ժառանգներից մեկի կողմից՝ Ապահովագրված անձի մահվան վկայականը կամ Ապահովագրվածին մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը Ապահովագրողին ներկայացնելու եղանակով:

11.9.6. Եթե դժբախտ պատահարի հետևանքով մահվան գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո երբևէ պարզվի, որ Ապահովագրված անձը կենդանի է, վճարված ապահովագրական հատուցումները ենթակա են վերադարձման Ապահովագրողին՝ դրանք ստացած անձի կողմից:

11.10. Մշտական անաշխատունակություն Դժբախտ պատահարի հետևանքով

11.10.1. Մշտական անաշխատունակության դեպքում՝ ապահովագրական հատուցումն Ապահովագրվածին վճարվում է Օրագրի համաձայն (Հավելված 1): Հաշվարկի հիմք են հանդիսանում ապահովագրական գումարը և պատահարի հետևանքով Ապահովագրված անձի անաշխատունակության աստիճանը՝ համաձայն Հավելված 1-ի:

11.10.2. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Սույն Պայմանների 7.6.4. և 7.6.5. կետերով սահմանված ժամկետներում:

11.10.3. Եթե մշտական անաշխատունակության հանգեցրած պատահարի տեղի ունենալուց հետո Ապահովագրված անձը մահանում է, ապա մահվան դեպքում Ապահովագրողի կողմից վճարվում է մահվան գծով հատուցման ենթակա գումարի և մշտական անաշխատունակության գծով արդեն վճարված ապահովագրական հատուցման գումարի տարբերությունը:

11.10.4. Դժբախտ պատահարի արդյունքում առաջացած մշտական անաշխատունակության նպաստը վճարվում է միանվագ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու համար, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների (տարերային աղետներ, պետական իրավասու մարմինների կողմից այնպիսի որոշումների ընդունումը, որոնց կատարումը պարտադիր է Կողմերի համար և դարձնում է անհնարին Պայմանագրով նախկինում ստանձնած պարտավորությունների կատարումը և այլն):

12.2. Պայմանագրի կատարման ժամանակ առաջացած բոլոր տարաձայնությունները Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

13.1. Ապահովագրության պայմանագիրը, եթե դրանում այլ բան նախատեսված չէ, կնքվում է մեկ տարի ժամկետով:

13.2. Ապահովագրության պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ուժի մեջ է մտնում՝

13.2.1. Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ գումարը Ապահովագրողին կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին վճարման պահից, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00:00,

- 13.2.2.** Ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա առաջին մասի հաշվարկային հաշվից անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովադրի հաշվարկային հաշվից Ապահովագրողի կողմից նշված բանկում նրա հաշվարկային հաշվին գումարի փոխանցման օրվան հաջորդող օրվա 00:00, բայց ոչ շուտ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 23:59,
- 13.3.** Պայմանագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում որպես ավարտի օր նշված օրվա տեղական ժամանակով ժամը 23:59-ն:
- 13.4.** Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է՝
- 13.4.1.** Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցում վճարելու իր պարտավորությունները ամբողջությամբ կատարելու դեպքում,
- 13.4.2.** Ապահովագրողի կամ Ապահովադրի նախաձեռնությամբ, ցանկացած պահի, պայմանով, որ Պայմանագրից հրաժարվող կողմը այդ մասին ոչ պակաս քան 30 օր առաջ պետք է գրավոր ծանուցի մյուս Կողմին,
- 13.4.3.** Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ Ապահովադրի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետներում ապահովագրավճարի չվճարման (տարաժամկետ վճարման դեպքում՝ դրա հերթական վճարումը չկատարելու) դեպքում ,
- 13.4.4.** Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած պահի,
- 13.4.5.** Ապահովադրի կողմից Պայմանագրի էական պայմանների խախտման դեպքում:
- 13.4.6.** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 13.5.** Պայմանագրի գործողությունը Ապահովագրված անձի մասով վաղաժամկետ դադարում է՝
- 13.5.1.** Ապահովագրված անձի մահանալու դեպքում,
- 13.5.2.** Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցում վճարելու իր պարտավորությունները ամբողջությամբ կատարելու դեպքում,
- 13.6.** Պայմանագրին ամբողջությամբ կամ որևէ ապահովագրված անձի մասով վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովադրին ապահովագրավճարի հետ վերադարձ չի կատարվում:
